

ԱՍՏՈՒԾՈՅ ԵԶԱԿԱՆ ՅՈՒՂԱՐԿԱԽՈՐԸ

ՓՐՈՑ. ԳԱՔՐԻԷԼ ՎԱՀԱՆԵԱՆ

«Աստուած մեռած է. կեցցե՛ր Գերմարդը...»¹:

ԶԱՐԱԳՈՒՇԱԿ ՄԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՄԸ

Կը պատմեն՝ թէ խենթ մը, օր ցերեկով լապտերը վառած, վազեց դէպի չուկայ աղաղակելով. «Աստուած կը փնտռեմ, Աստուած կը փնտռեմ»: Ու մինչ ամբոխը կը ծաղրէր զինքը, ան իր սուր նայուածքը սեւեռեց իր ծաղրածուններուն եւ դռնէն անց:

«Ո՛ր է Աստուած: Զեզի կ'ըսեմ որ մենք սպաննեցինք զինքը... դուք եւ ես... մե'նք, ամէնքս ալ, Աստուծոյ մարդասպաններն ենք... Աստուած մեռած է, Աստուած մեռած կը մնայ... եւ ճիշտ մենք ըսպաննեցինք զինքը... Խնչպէս կրնանք մխիթարուիլ մենք՝ մարդոցմէ ամէնէն աւելի արինարբուններս: Մեր ոյժերէն վեր դուրծ մը չէ՞ արդեօք ասիկա. եւ անոր արժանի ըլլալու համար պէտք չե՞նք արդեօք մենք աստուածներ ըլլալ: Աշխարհի մէջ ասկէ աւելի ծանր դէպք պատահած չէ, երբեք...»: Լուեց խենթը. ամբոխը նոյնպէս լուռ էր եւ սահմուկած: Ան գետին չալտեց հոսկ իր ձեռքի լապտերը, որ մարեցաւ ջարդուփշուր. եւ ըսաւ. «Շատ կանուխ կը հասնիմ. յարմար ժամանակը չէ տակաւին: Այս արտակարգ դէպքը դեռ չէ վերջացած, դեռ ամէնուն լսելի չէ եղած...»²:

ԱՆԱՍՏՈՒԱԾ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆԸ

Անցեալ դարու վերջաւորութեան դրուած այս բուռն մենախօսութիւնը՝ այսօր արդէն իսկ կ'արձագանգէ ամէն կողմ. «Աստուած մեռած է»...: Եւ այս բացատրութիւնը կը տպաւորէ, կը դայթակղե-

ցընէ, կը զարմացնէ, մանաւանդ երբ զայն կը լսենք աստուածաբաններու բերանէն: Նոր աշխարհէն կու գայ այս վերջին նորոյթը՝ որ «քրիստոնէական անաստուածութիւն» կամ «Աստուծոյ մահուան աստուածաբանութիւն» անուններով ճանչցուած է: Շարժում մը՝ որ ծնած է ճարտարարուեստական ընկերութեան մշակութային եւ տրնտեսական պայմաններէն, եւ որուն աստուածաբանական հիմը երկդիմի է եւ յաճախ խախուտ: Աննախընթաց այս շարժումին հռչակուած պարագլուխներն են Ուիլիամ Համիլթըն (W. Hamilton), Ֆան Պուրէն (P. Van Buren) եւ Ալթայցեր (T. Altizer):

Ահաւասիկ համառօտ կերպով անոր արտաքսապէս պատահական սկզբնաւորութիւնը. «The New York Times»-ի կրօնական բաժնի պատասխանատուն կը կարդայ Ուիլիամ Համիլթընի մէկ յօդուածը՝ լոյս տեսած «Christian Scholar»-ի 1955-ի Ապրիլի թիւին մէջ, որուն զորայ անմիջապէս կը սկսի յօդուածաշարք մը՝ «Նոր աստուածաբանները կը մտածեն քրիստոնէութիւնը առանց Աստուծոյ խորագրով: Ասիկա առաջին կայծն էր տակաւին, բայց չուտով հրդեհի պիտի վերածուէր: Եւ իրապէս՝ յօդուածներ իրարու յաջորդեցին, կայծակի արագութեամբ, «The New Yorker»-ի, «Time»-ի, եւ «New York Herald Tribune»-ի էջերուն վրայ, եւ «անաստուած աստուածաբանութիւնը» ռումբի պէս պայթեցաւ՝ արձագանգելով Ամերիկայի մէկ ծայրէն միւսը:

Լրագրային լայնածաւալ յաջողութիւնը, սակայն, ժխտական արդիւնք ունեցաւ այս արտակարգ շարժումին վրայ, որովհետեւ խուսափելով ոքեւէ հակակշիռէ, հետզհետէ անցաւ միշտ աւելի ցած մակարդակի հեղինակներուն ձեռքը, որոնք միայն աղմուկ եւ իրարանցում տարածեցին իրենց շուրջ: Իսկ ճարահատ եւ ապահար աստուածաբանները ինքզինքնին յանկարծակի հասարակաց կարծիքի լուսարձակին տակ դտնելով, անակընկալօրէն թաւալեցան շարժումի մը մէջ, զոր իրենք երբեք չէին ծրագրած, եւ նկատուեցան ներկայացուցիչները աստուածաբանութեան մը՝ զոր դեռ ամբողջութեամբ չէին բանաձեւած:

Քրիստոնեայ անաստուածութեան հիմնական եւ զգայացունց աւետիսը Աստուծոյ մահն է. Աստուած մեռած է, կ'ըսեն, եւ քրիստոնէութիւնը գոյատեւելու համար՝ պէտք է վարժի գործել առանց Աստուծոյ, ու դոհանայ միայն Յիսուս Քրիստոսով: Ֆան Պուրէնի համաձայն՝ Աստուած մեռած է, որովհետեւ լեզուի իմաստասիրութիւնը ապացուցած է՝ որ Աստուծոյ մասին եղած արտայայտութիւնները ոչ մէկ իմաստ կրնան ունենալ: Համիլթընի եւ Ալթայցերի համար Աստուած իրապէս եւ վերջնականապէս մեռած է՝ Յիսուս Քրիստոսի մէջ: Ան մեռած է, որովհետեւ ուզած է հրաժարիլ իր գոյութենէն,

1. FRIEDRICH NIETZSCHE, Ainsi parlait Zarathoustra (Այսպէս խօսեցաւ Զարադուստրան) Փրնս. Թրքմն. Henri Albert, տպ. Mercure de France, էջ 406:

2. Նոյն, Gai savoir (Զուտք գիտութիւն), Թրքմն. Albert, էջ 125:

որպէսզի աշխարհս կարենայ յառաջադիմել, ու մարդս՝ իր լրիւ հասունութեան տիրանալ:

Թէեւ այս շարժումը արտաքսապէս պատահական ծագում մը ունեցաւ, սակայն իրականութեան մէջ, անոր արմատները բաւական խոր են. անիկա կ'ենթադրէ ամբողջ ենթահող մը, ուր գլխաւոր դերակատարները եղած են ԺԺ. դարուն բուսած բողոքական աստուածաբանութեան զանազան հոսանքները, որոնք հետզհետէ անդամահատեցին քրիստոնէութիւնը, զրկելով զայն կենսական նեցուկներէ: Այստեղ նպատակէ դուրս է մտնել այդ անել բաւիղներուն մէջ. պիտի դռնանանք ներկայացնելով հայազգի աստուածաբան՝ Գաբրիէլ Վահանեանի տեսակէտները այս հարցին մասին:

ԱՍՏՈՒԾՈՅ ԵԶԱԿԱՆ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐԸ

Գաբրիէլ Վահանեան՝ բողոքական աստուածաբան մըն է, ծնած Մարտէշլ, 1927ին: Կրենովի համալսարանին Գրական ճիւղը աւարտելէն ետք, աստուածաբանութեան պատկաւոր եղած է Սորպոնի համալսարանին մէջ: Ապա մեկնած է Ամերիկայի Միացեալ Նահանգները, ուր Փրինսթընի աստուածաբանական համալսարանէն ստացած է վարդապետութեան (doctorat) աստիճանը: Ներկայիս կը դասախօսէ Սիրաքիւզի համալսարանին մէջ (Նիւ Եորքի նահանգ):

Ունի բազմաթիւ հրատարակութիւններ, որոնցմէ են. *The Death of God*³ (Աստուծոյ մահը), *Wait without idols*⁴ (Սպասում՝ առանց կռուքերու), *No other God*⁵ (Ոչ մէկ ուրիշ Աստուած):

Գլխաւոր գործը, անտարակոյս, առաջինն է՝ «Աստուծոյ մահը»⁶, որ մէկ անգամէն հոգեկեց զինքը: Այս գիրքին մէջ, հեղինակը երեք գլխաւոր հարցեր կը շօշափէ. նախ՝ կը քննարկէ մեր դարուն ապաքրիստոնէացման պատճառները. երկրորդ՝ կը թուէ զայն վերամըկըրտելու զանազան ձախող փորձերը, կատարուած Մարիթէնէն, Պուլթմանէն, Թիլլիխէն եւ ուրիշներէ. հուսկ՝ կը բնորոշէ արդի կրօնական հոգին, որ՝ իրեն համաձայն՝ քրիստոնէական չէ այլեւս, այլ յետ-քրիստոնէական:

Ահաւասիկ թէ ինչպէս նոյնինքն Վահանեան, յառաջաբանին մէջ կ'ամփոփէ իր գործին ծրագիրը. «Հետեւեալ էջերուն մէջ, ես կը

փորձեմ ներկայացնել պատմականօրէն (բայց համառօտ կերպով) քրիստոնէութեան այս աստիճանաւոր մաշումին եւ ներքին ամուլթեան ախտանիշներէն քանի մը հատը: Մէջբերելով, հուսկ, ժամանակակից զանազան քրիստոնեայ մտածողներու ճիգերը՝ ի նպաստ քրիստոնէական նոր մշակոյթի մը, կը փորձեմ ցոյց տալ թէ ինչպէս եւ ինչո՞ւ համար մեր քաղաքակրթութիւնը կը հակասէ անոնց, եւ թէ ինչպէս անիկա անթափանցելի կը մնայ քրիստոնէութեան համար, եւ մշակութապէս հեռու Աստուծոյ, մանաւանդ թէ՝ աստուածութեան: Այս տեսակէտով, վերջին տասնամեակի այսպէս կոչուած կրօնական վերադարձումը կը նշէ անցքը քրիստոնեայ դարաշրջանէն դէպի յետ-քրիստոնէական դարաշրջանը»⁷:

Միեւնոյն տեսակէտները կը կրկնուին նաեւ իր միւս գիրքերուն մէջ ալ, եւ միեւնոյն եզրակացութիւնը հետզհետէ աւելի կ'արմատանայ, այսինքն՝ թէ կ'ապրինք իրապէս յետ-քրիստոնէական դարաշրջանի մը մէջ: Եթէ Նիցշէի համար «Աստուծոյ մահ»ը հակաքրիստոնէական իմաստ մը ունէր, Վահանեանի համաձայն՝ անիկա նախադուռն է յետ-քրիստոնէական դարաշրջանին:

Ըստ մեր հեղինակին, քրիստոնէութիւնը՝ կրօնական դեմքի վրայ՝ անդարմանելի կերպով վիրաւոր է եւ հոգեվարքի մէջ. միւս կողմէ՝ մեր մշակոյթը ալ չի կրնար ներշնչուիլ իրեն ծնունդ տուող եւ զինքը կազմաւորող քրիստոնէութեան գաղափարախօսութենէն: Այսպէս՝ անիկա կ'ապրի կրկնակի հոգեվարք մը, կրօնական եւ մըշակութային միաժամանակ: Մինչ, անցեալին մէջ, մշակոյթը կը հիմնուէր Աստուծոյ իրականութեան վրայ, ասկէ ետք Աստուծոյ մահուան գաղափարն է որ պիտի խմորէ ամբողջ մեր քաղաքակրթութիւնը: Անոր հիմքը, սակայն, հակառակ որ իրենց հեռաւոր ծագումը կը պարտին քրիստոնէութեան, այլեւս ո'չ քրիստոնէական են եւ ոչ ալ հակաքրիստոնէական, այլ յետ-քրիստոնէական: Հո'ն քրիստոնէութիւնը «չ'ենթարկուիր չարաչար մահուան, այլ կը մատնուի հանդարտօրէն անհետացումի»⁸:

Ահա՛ այս հեռանկարին մէջ է որ պէտք ենք դետեղել Վահանեանի տեսութիւնները, որոնք անտարակոյս դուրս կը ցայտեն իրենց քաղութեամբն ու անկեղծութեամբը, մատնելով խորքին մէջ անձկայից ճիգ մը՝ հեւքոտ փնտռութի:

Փրոֆ. Գ. Վահանեանի անունը սովորաբար կը յիշուի Համիլթընի, Ֆան Պուրէնի եւ Ալթայցէրի կողքին: Եւ իրապէս, կասկած չկայ որ Վահանեանի «Աստուծոյ մահը» գիրքը մեծապէս նպաստած է

7. *La mort de Dieu*, էջ 14:

8. Անդ, էջ 14:

3. Հրտ. George Braziller, New York, 1961.

4. Հրտ. George Braziller, New York, 1964.

5. Հրտ. George Braziller, New York, 1966.

6. Այստեղ կ'օգտագործենք անոր Փրանսերէն թրգմ.ը, «*La mort de Dieu*», հրտ. Buchet-Chastel, Paris, 1962, էջ 219 (թարգմանում՝ Bernard Wilerval կողմէ):

«անաստուած քրիստոնէութեան» տարածումին: Ինք, սակայն, բազմաթիւ անգամներ ուրացած է թէ կը պատկանի այդ շարժումին. եւ օրին մէկը հետեւեալ պատասխանը տուած է լրագրողի մը՝ որ կը հարցնէր իրեն թէ արդեօք ի՞նքն ալ «Աստուծոյ մահուան աստուածաբան» մըն էր. «Ո՛չ, ի սէր Աստուծոյ. արդէն այնքան դժուար է պարզապէս աստուածաբան մը ըլլալը...: Երբ ինծի կ'ըսեն թէ ա՛յս կամ ա՛յն տեսակի աստուածաբան մըն եմ, այն ատեն կը սկսիմ մըտահոգուիլ. վերադիւրսերը աստուածաբանութեան աղքատութիւնը կը ծածկեն»:

Իրականութեան մէջ, Վահանեան «անաստուած» քրիստոնեայ մը ըլլալէ աւելի՝ քննադատ մըն է: Քրիստոնեայ «անաստուածութեան» հիմնական դադափարները երկու հատ են, եւ Վահանեան երկուքն ալ կը մերժէ. առաջինին դէմ՝ որ քրիստոնէութիւնը փրկելու համար անհրաժեշտ կը նկատէ լքել զԱստուած, ան կը յայտարարէ՝ թէ «Սուրբ-բային մտածողութեան համար իրա՛ւ կեանքի հիմը Աստուած է»⁹. Իսկ երկրորդին դէմ՝ որ կ'առաջարկէ դնել Քրիստոսը, մեռած Աստուծոյ տեղ, Վահանեան կը պայքարի իբրեւ ամէնէն աւելի վտանգաւոր փորձութիւնը՝ քրիստոսաբանական գետնի վրայ:

Հետեւաբար, հակառակ որ Աստուծոյ մահուան դադափարը կը կազմէ իր դործին հիմնական առանցքը, Վահանեան անաստուած քրիստոնեայ մը չէ, որովհետեւ, ինչպէս ինքն ալ ներածութեան մէջ կը շեշտէ, չի մօտենար հարցին իբրեւ աստուածաբան, այլ իբրեւ պատմաբան: Վահանեանի նպատակը աստուածաբանական կառոյց մը չինել չէ, ինչպէս որ ըրած են Համիլթըն, Ֆան Պուրէն, Ալթայ-ցէր, մեկնելով Աստուծոյ մահուան դադափարէն. Վահանեան կ'ուզէ ախտաճանաչումն ընել Աստուծոյ մահուան կրօնա-մշակութային երեւոյթին, եւ տալ բացատրութիւն մը Աստուծոյ անհետացումին՝ արդի մշակոյթի եւ կեանքի բեմէն: Հետեւաբար, իրենը աւելի ընկերաբանական եւ պատմական հետազոտութիւն մըն է: Ուստի, պէտք ենք զգուշանալ բացարձակ հանգամանք մը տալէ Աստուծոյ մահուան այս մշակութային երեւոյթին, եւ զայն հաւատքի առարկայի մը վերածել, որպէսզի չկարենայ ամբողջական եւ անլիճելի կերպով պայմանաւորել մեր ամբողջ գոյութիւնը: Որովհետեւ «Աստուծոյ մահը իմաստ մը կ'ունենայ եւ ազատագրող եղելութիւն մը կը դառնայ միայն ա՛յն ատեն՝ երբ զայն նկատենք լոկ իբրեւ մշակութային երեւոյթ մը»¹⁰:

9. Ամդ, էջ 79:

10. VAHANIAN GABRIEL: «Swallowed up by Godlessness», լոյս տեսած՝ The Death of God Debate հաւաքածոյին մէջ, The Westminster Press, Philadelphia, 1967, էջ 145:

ՔՐԻՍՏՈՆԵՒԻԹԵԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ՀՈԳԵՎԱՐՔԸ

Կրօնական հոգեվարքին գլխաւոր յատկանիշերէն մէկը կը կազմէ «աշխարհականացում»-ի երեւոյթը: Ներկայ քաղաքակրթութիւնը այլեւս «չ'ընդունիր անդենականը, այլ՝ միայն ասդենականը. անիկա այլեւս սրբազան չէ, այլ՝ աշխարհիկ: Ասիկա կը բացատրուի անով՝ որ քրիստոնէութեան էապէս առասպելական (mythologique) աշխարհահայեցքը ամբողջովին տեղի տուած է գիտական աշխարհահայեցքի մը, ուր Աստուած այլեւս ո՛չ անհրաժեշտ է եւ ոչ ալ աւելորդ. Ան օտար է, Ան մեռած է»¹¹:

Վահանեանի համաձայն՝ քրիստոնէութիւնը, այսօր, բոլորովին հակառակ անոր՝ ինչ որ ըրած է ատենօք, «կը վերածէ մարդս՝ Աստուծոյ մասին ճառող շատախօս եւ փուճ թռչուններու»¹², որոնք խօսքերու տարափին տակ կ'ուզեն ծածկել իրենց խեղճութիւնը: Եւ այս խեղճութիւնը իր դադաթնակէտին կը հասնի արդի կրօնականութեան (religiosité) մէջ, որ կը շարունակէ գոյատեւել՝ ի հեճուկս Աստուծոյ մահուան, որովհետեւ մարդս էապէս կրօնական էակ մըն է: Բայց այս կրօնականութիւնը արդիւնք է հիւանդագին հետաքրքրութեան եւ եսասիրութեան, որ այլեւս հաւատք չէ, այլ՝ նախապաշարում: Եւ այս վերջինս է որ ծնունդ կու տայ կուռքերուն, որոնք կանգնած են մարդուս սրտին մէջ, մեռած Աստուծոյ ձգած պարապութեան վրայ:

Արդի կրօնականութիւնը, հետեւաբար, ո՛չ քրիստոնէական է, ո՛չ ալ դուռ աշխարհիկ. անիկա կուպաշտ է եւ կը մերժէ քրիստոնէութիւնը: Խորքին մէջ, շատ տարբերութիւն չկայ՝ անոր եւ մերօրեայ ոչ-քրիստոնեայ հիւմանիզմին միջեւ. երկուքն ալ մարդակեդրոն են եւ աստուածամերձ:

Վահանեան անխնայ կը հարուածէ արդի կրօնականութեան յոռի կողմերը. ինչպէս՝ կեղծաւորութիւնը, մակերեսայնութիւնը, հաճոյապաշտութիւնը, պատեհապաշտութիւնն ու կուպաշտութիւնը: Կրօնականութեան այս յարաճուն վերելքը կը վերագրէ քրիստոնէութեան արժէքազրկումին. «Կրօնականութիւնը յաղթեց քրիստոնէութեան, որովհետեւ քրիստոնէութիւնը կորսնցուց իր նախնական արժէքը»¹³, եւ կամ՝ «կրօնականութիւնը քրիստոնէութեան ուրացումն է, ճիշտ ինչպէս որ մեր այսօրուայ մշակոյթը դաւաճանութիւն մըն է քրիստոնէութեան հանդէպ»¹⁴:

11. La mort de Dieu, էջ 14:

12. Ամդ, էջ 17:

13. Ամդ, էջ 182:

14. Ամդ, էջ 208:

Այսպէս կը դրէ ուրիշ գեղեցիկ էջի մը վրայ. «Արդի մարդը, առնուազն տեսակէտով մը, տկար է եւ չմորած, Մարիամ Մազդա-դենացիին պէս, որ Յիսուսի պարապ գերեզմանին առջեւ կու լայ՝ որովհետեւ տարած են Տէրը գերեզմանէն...: Արդի մարդը՝ որ այլ-եւս պէտք չունի Աստուծոյ, պէտք ունի ինքզինքը դտնելու. ան վե-րադարձած է իր մեկնակէտին»¹⁵:

Յայտնի է որ Վահանեան երբեք չէ խանդավառուած վերջին տասնամեակներու կրօնական երեւոյթներով, որոնք, յատկապէս Ա-մերիկայի մէջ, սունկի նման բուսած են ամէն կողմ. արդէն Վա-հանեանի հետազոտութիւններուն դաշտը գլխաւորապէս Ամերիկայի իրականութիւնն է: Կրօնականութեան այդ բարգաւաճումը «մեզի կը յիշեցնէ, կ'ըսէ Վահանեան, թէ անիկա մարդկային դոյութեան բա-ղադրիչ (թէեւ ժխտական) տարրերէն մէկն է, եւ որ միշտ այդպէս պիտի ըլլայ. բայց ասիկա կարելի է ըսել այն չափով՝ որով կ'ըսենք թէ մահը անխուսափելիօրէն մաս կը կաղմէ կեանքին... եւ մահը անդադար կը սպառնայ կեանքին, ինչպէս կրօնականութիւնը՝ Աս-տուծոյ վրայ ունեցած մեր հաւատքին»¹⁶:

Քրիստոնէական աւանդութեան համաձայն, Աստուծոյ վրայ ու-նեցած մեր հաւատքը՝ ձեւով մը կապուած է մարդուն մէջ հաւատքի պակասին հետ. «Հաւատամ, Տէ՛ր, օգնեա՛ անհաւատութեանս իմում» կ'աղաղակէր մարդը, դեռ մինչեւ երէկ: Այսօր, սակայն, դիտել կու տայ Վահանեան, «կարծէք քրիստոնէական հաւատքը դադրած է ան-հաւատութեան սպեղանին ըլլալէ»¹⁷: Ասոր իբր հետեւանք՝ մարդու մասին եղած քրիստոնէական ըմբռնումը յայտնի կերպով արժէքա-զրկուած է. «Քրիստոնէութիւնը այլեւս յենակէտներ չ'ընծայեր ար-դի մարդուն, որովհետեւ մարդուս ինք իր մասին ունեցած ըմբռ-նումը բոլորովին տարբեր է քրիստոնէական ըմբռնումէն»¹⁸:

Բարեկարգութիւնն անգամ (Réforme = Բողոքական շարժում) չկրցաւ յեղաշրջել այս ըմբռնումը. քրիստոնէութեան խորքը մնաց միշտ նոյնը: Ներկայ փոփոխութիւնը, սակայն, ճիշտ այդ խորքն է որ կը հարուածէ, մերժելով քրիստոնէութեան հաւատքը, անոր իրա-կանութիւնն ու հիմը:

«Այսօրուայ մարդուն համար, կը շարունակէ Վահանեան, քրիս-տոնէութիւնը օտար եւ խորթ կը թուի. չի խօսիր անոր սրտին, բա-ցակայ է անոր ընկերային եւ քաղաքական կեանքէն: Պէտք չենք մոռ-նալ որ «քրիստոնէութիւնը, իբրեւ կազմակերպուած մարմին, յաճախ

15. ԱՅԳ, էջ 170:

16. ԱՅԳ, էջ 19:

17. ԱՅԳ, էջ 20:

18. ԱՅԳ, էջ 20:

նուաստացուցած է մարդս, մատնելով զայն գերութեան, մերժելով անոր ստեղծագործ երեւակայութիւնը. եւ անոր սահմանաւորութեան ներքին արժէքը»¹⁹:

Վահանեան կ'ընդլայնէ այս տեսակէտը՝ հիմնուելով պատմու-թեան վրայ, եւ դիտել կու տայ որ «պատմութեան ընթացքին՝ քրիս-տոնէութիւնը նուազ արդիւնք տուած է, երբ կազմակերպուած է»²⁰: Եւ իրապէս, կրօնքը իր կազմակերպուած վիճակին մէջ, երբ կը դաշ-նակցի աշխարհիկ կազմակերպութեան հետ, եւ առանց անհրաժեշ-տութեան կը ձուլուի անոր մէջ, այդ պարագային կը զրկէ հաւատքն ու մշակոյթը՝ իրենց փոխադարձ ազատութենէն: Հետեւաբար, կ'եզ-րակացնէ Վահանեան, «հիմնարկի (institution) վերածուած Եկեղե-ցին»՝ չի կերպարանափոխեր աշխարհս, այլ գերութեան կը մատնէ զայն»²¹: Այդ գերութիւնը, սակայն, փոխադարձ է. անիկա կ'ենթա-դրէ նաեւ քրիստոնէութեան ալ մահը:

Հիւանդ քրիստոնէութեան այցի եկած այս վերջին բժիշկը, ու-րեմն, կը հռչակէ անոր մահը, մատնանշելով յետ-քրիստոնէական դարաշրջանին արշալոյսը: Եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու կրօնական եւ ընկերային վիճակէն քաղած այս եղբակացութիւնը կ'ընդհանրացնէ ամբողջ արեւմտեան աշխարհին համար, ուր, հա-կառակ վերադարձում մը աւետող երեւոյթներուն, Վահանեան չի կրնար անտեսել չարագուշակ նշանները քրիստոնէութեան վերջա-լոյսին:

Վահանեանի համաձայն, Աստուծոյ մահուան ամէնէն աւելի ցայ-տուն նշանը՝ քրիստոնէական գաղափարներու նսեմացումն է. մար-դու, աշխարհի, ազատութեան եւ հեղինակութեան գաղափարները կորսնցուցած են, ուկ'ըսէ, իրենց Սուրբ-գրային արժէքը եւ բոլորո-վին աշխարհականացած:

Առնենք ստեղծագործութեան գաղափարը, որ զուտ հրէա-քրիս-տոնէական է. Աստուածաշունչին համաձայն «մարդս եւ աշխարհը Աստուծոյ ստեղծագործութիւններն են, հետեւաբար՝ Աստուած բո-լորովին տարբեր է իր ստեղծածէն, եւ ո'չ մարդը, ոչ ալ աշխարհը նկատուած են իբրեւ ինքնաբաւ եւ անկախ էակներ»²²: Արդի ըմբռ-նումը ճիշտ հակառակն է ասոր. մերժելով ստեղծագործութիւնը, ա-նիկա կը բանտէ «անստեղծ» մարդը՝ աստուածացած տիեզերքի մը անձկութեան մէջ:

Եւ այսպէս, մարդս կ'ըլլայ կեղբոնն ու գերագոյն արժէքը՝ քրիս-տոնէական դարաշրջանին, հանդիսանալով նո'ր փրկիչը՝ Քրիստո-

19. ԱՅԳ, էջ 21:

20. ԱՅԳ, էջ 21:

21. ԱՅԳ, էջ 22:

22. ԱՅԳ, էջ 28:

սի փոխարեն: Մարդս պատասխանատու կը զգայ ինքզինքը աշխարհի հանդէպ, բայց այդ պատասխանատուութիւնը այլեւս չի յայտնուիր լոկ իբր հետեւանք մը Աստուծոյ հանդէպ ունեցած իր պատասխանատուութեան, այլ անիկա յանձնառութեան միակ ձեւն է՝ դոր ան կը ճանչնայ եւ կ'արդարացնէ. «Եւ այս բոլորը կը հիմնուի պատճառաբանութեան մը վրայ, որ կը նմանի քրիստոնէութեան համար աւանդական դարձած անկեալ տիեզերքի դադարիւրին, որ պէտք ունի Աստուծոյ փրկարար միջամտութեան: Բայց ասկէ ետք մարդս ինքն է որ կը սեփականացնէ իրեն այդ աստուածային մենաշնորհը: Տիեզերքի հանդէպ զգացած իր պատասխանատուութիւնը կը կայանայ զայն փրկելուն մէջ այն հակասական տարրերէն, որոնց դիմաց կը հռչակէ իր անմեղութիւնը»²³:

Նոյնքան յայտնի կերպով Աստուծոյ Թագաւորութեան դադարիւրն ալ կորսնցուցած է իր իմաստը: Աստուածաշունչին համաձայն՝ Աստուծոյ Թագաւորութիւնը աշխարհավերջեան (eschatologique) իրականութիւն մըն է, որ թէեւ սկսած է Քրիստոսի դալուստով, բայց իր լրումին պիտի հասնի աշխարհի կատարածին: Մինչդեռ արդէ «անաստուած» քրիստոնէութիւնը կը հաւատայ լոկ երկըւաւոր Թագաւորութեան մը, որուն իրադրոժումը ո՛չ մէկ կերպով կախում ունի Աստուծմէ: Անոր բացարձակ հեղինակը մարդն է, կոթնած իր պզտ նախաձեռնութեան եւ ճարտարութեան վրայ. եւ այս մարդը բոլորովին ինքնավար է եւ անկախ²⁴:

Դարձեալ, Աստուածաշունչին համաձայն՝ հեղինակութիւնը Աստուծմէ կը բխի, մինչդեռ արդէ մարդը հեղինակութեան միակ աղբիւր մը կը ճանչնայ՝ գիտութիւնը: Եւ կարծէք քրիստոնէութիւնն ալ վարակուելով անկէ, փոխարինեց Աստուծոյ հեղինակութիւնը գիտութեամբ, եւ «վերածուեցաւ կեանքի եւ տիեզերքի մասին ճառով տեսական դրութեան մը... հռչակեց թէ ինքը բարիին եւ չարին դիտութիւնը ունի. եւ, Ադամին պէս, «ինկաւ»: Գիտութեան հանդէպ իր բռնած դիրքը զինք վերածեց պարզ դրութեան (système) մը: Ըլլալով խոցելի՝ ինչպէս բոլոր դրութիւնները, ստիպուեցաւ ապրիլ դրութեան մը կեանքը: Անմիջապէս մարտահրաւէրի ձեռնոց նետուեցաւ իրեն: Գիտութիւնը, որ թոյլատրուած էր՝ որովհետեւ կը նըպաստէր տիեզերքի մէջ Աստուծմով հիանալու, յստակօրէն տեսաւ թէ այս հիացումը էական չէր իր նպատակներուն եւ իր յաղթանակներուն համար... հետեւաբար՝ անիկա աշխարհի մէջ այլեւս Աստուծոյ ճանաչումը չփնտռեց: Այդ վայրկեանէն սկսեալ՝ ուղեց պարզապէս լոկ աշխարհը ճանչնալ... եւ փորձեց բացատրել տիեզերքը

23. Անդ, էջ 168:

24. Անդ, հմտ. Գլխ. Բ. եւ Դ.:

իրբեւ ինքնավար իրականութիւն մը, առանց անհրաժեշտօրէն դիմելու արտաքին աղբիւրներու, ինչպէս օրինակ Աստուծոյ»²⁵:

Քրիստոնէութիւնը կրնար շատ լաւ ընդունիլ գիտութեան այս դիրքը, եթէ այս վերջինս չվերածէր Աստուածը պարզ-ենթադրութեան մը: Գիտութիւնը, իրականութեան մէջ, անակնկալ ծառայութիւն մը ըրաւ քրիստոնէութեան, ջնջելով բնապաշտութիւնը, սնահաւատութիւնը. բայց այս բոլորը քրիստոնէութեան Աստուծոյ անունով չէր որ կը գործէր: Մէկ խօսքով՝ կարելի չէր այլեւս գիտութիւնը քրիստոնէութեան ծնունդը նկատել. գիտութիւնը հիմնուած էր բոլորովին հակաքրիստոնէական սկզբունքներու վրայ, եւ քրիստոնէութիւնը հաւասարապէս մերժեց թէ՛ նորածագ գիտութիւնը եւ թէ՛ անոր ետեւ թաքուն սկզբունքները:

Հետեւանքը պարզ էր. հսկայաքայլ յառաջացող գիտութիւնը դրաւ երբեք քրիստոնէութեան ասպարէզը, ներկայանալով իբրեւ միակ հեղինակութիւն: Այսպէս, Ցայտնութիւնը տեղիք կու տար գիտութեան եւ գիտարուեստին (technique) առջեւ:

ՔՐԻՍՏՈՆԵՍԻԹԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈԳԵՎԱՐՔԸ

Շարունակելով իր ընկերա-պատմական հետազոտութիւնը, Վա-հանեան կը յայտարարէ քրիստոնէութեան սնանկացումը, նաեւ մշակութային գետնի վրայ:

Տարակոյս չկայ որ, պատմութեան ընթացքին, մարդիկ շարունակ վերանորոգումի պէտքը կը զգան. հետեւաբար՝ մարդկային եւ մշակութային ձեռնարկները պէտք են վերատեսութեան ենթարկուիլ գրեթէ հազիւ հիմնուած, այլապէս՝ կը կորսնցնեն իրենց իմաստը. կամ նոյնիսկ եթէ շարունակեն գոյատեւել, կը նմանին մարած աստղերու, որոնց լոյսը միլիոնաւոր տարիներու անծայրածիր անջրպետէն է որ կը հասնի մեզի, բայց չի կրնար լուսաւորել ու ջերմացնել, որովհետեւ անոր աղբիւրը ցամաք՝ է արդէն...:

Ժամանակի անգութ մաշումին ենթակայ են մանաւանդ կրօնքները. եւ քրիստոնէութիւնը բացառութիւն չի կրնար կազմել, կ'ըսէ Վահանեան. «Տուեալ սերունդի մը քրիստոնէական ըմբռնումները անխուսափելիօրէն կ'արժեքազրկուին, երբ յաջորդ սերունդը իր հաստատութեան կը տիրանայ»²⁶: Բայց, մինչ անցեալին մէջ քրիստոնէութիւնը յաջողած էր դարմանել սերունդներու եւ դադարներու բախումէն առաջ եկած վէրքերը, այսօր այլեւս վերակառուցումի այդ գործը անկարելի կը թուի, որովհետեւ «ներկայ կացութիւնը

25. Անդ, էջ 162-163:

26. Անդ, էջ 132:

բոլորովին կը տարբերի Միջին-Դարէն»²⁷։ Այն շրջանին, ի հեճուկս սպառնացող վտանգներուն, քրիստոնէութիւնը դիմագիծ մը կերտած էր ինքնիրեն համար. եւ ճիշտ այդ դիմագիծն է որ այսօր եղծուած է, կը շարունակէ Վահանեան, եւ այլեւս չի պատշաճիր արդի մարդուն գոյավիճակին։ Այսօր խորթ կը թուի մեզի այդ դիմագիծը, որովհետեւ զայն կազմող մշակութային կառոյցը խորտակուած է դըղերդագին, տրորելով այն ամէն ինչ՝ որ տակաւին կը ներշնչուէր իրմէ։ Քրիստոնէութիւնը ատենին չէր զգացած վտանգը, ու դեռ կը շարունակէր կառնած մնալ այդ խախուտ շէնքին, մինչեւ որ տրորուեցաւ անոր բեկորներէն։

Իսկ ներկայիս, դիտել կու տայ Վահանեան, աշխարհս բոլորովին կերպարանափոխուած է, եւ այնպէս կը թուի՝ որ այլեւս որբացած քրիստոնէութեան հիւրընկալ անկիւն մը չէ մնացած։ Եւ իրապէս, այսօր քրիստոնէութիւնը շատ քիչ կամ չնչին չափով է որ կը ներշնչէ ու կը խմորէ մշակոյթ մը, որ հիմնովին տարբեր հորիզոններու վրայ կը փնտռէ իր ներշնչումի աղբիւրը։ Քրիստոնէական աւանդութիւնը, որ Սուրբ-գրային էր եւ գերանցական (Transcendante), արժէքազրկուած է եւ անոր փոխարէն՝ հրապարակ իջած են մարդուն եւ տիեզերքին մասին ճառող աստուածամերժ ըմբռնումներ։ Ահաւասիկ, Վահանեանի համաձայն, անոնցմէ գլխաւորները.

Բանապաշտութիւնը. — Դատանիչերու այս արմատական յեղաշրջումին գլխաւոր պատճառը կը նկատուի բանապաշտութիւնը, որ կը ներկայանայ իբրեւ սկզբնական մեղքը՝ արդի մտածողութեան։ Արդի մարդը ուղեց յստակ տեսնել ամէն բանի մէջ, մերժելով ընդունիլ որ «հաւատքը կ'ընկերանայ տարակոյսին»²⁸։ Արդի մարդուն ճշմարտութեան գերագոյն դատանիչը տրամաբանական հետեւողականութիւնն է, մինչդեռ՝ քրիստոնէութեան համաձայն՝ մարդուս կեանքի փորձառութիւնը բոլորովին տարբեր մակարդակի մը վրայ կը հաստանայ, եւ հաւատքի մարդը միայն տրամաբանութեամբ չի սնանիր։ Հետեւաբար, բանապաշտութեան նշանաբանը եղող տրամաբանական հետեւողականութիւնը «ներկայիս ամէնէն աւելի ծանր հարուածն է քրիստոնէութեան աւանդութեան համար»²⁹։

Մարդակեդրոն մտածողութիւնը (Anthropocentrisme). — Արդի մտածողութեան մէջ մարդս դրաւած է Աստուծոյ տեղը, վերագրելով ինք իրեն աստուածային հանգամանքներ եւ մենաշնորհներ։ Անիկա կը ներկայանայ իբրեւ նոր փրկիչ մը եւ իբրեւ ամենագերագոյն արժէքը՝ յետ-քրիստոնէական դարաշրջանին։ Անոր հաւատամբը շատ

27. Անդ, էջ 132։

28. Անդ, էջ 18։

29. Անդ, էջ 155։

պարզ եւ յստակ է. «Աստուած — ըլլա՛յ ան իրական կամ լոկ մտացածին — այլեւս ո՛չ մէկ առնչութիւն ունի մեր երկրաւոր գոյութեան հետ։ Աստուած մեռած է, ո՛չ միայն տեսական գետնի վրայ, այլ նաեւ մարդկային գոյավիճակի ամէնօրեայ իրականութեան մէջ»³⁰։

Հետեւաբար, ինչ որ այսօր կը ներկայանայ մեզի անմիջականօրէն եւ իր բոլոր ահեղութեամբը, Աստուծոյ իրական բացակայութիւնն է. Անոր մա՛հը, մէկ խօսքով, որուն ուղղակի փորձառութիւնը կը սնուցանէ դժբախտ մարդկութեան ամայացած կեանքը։

Երկրապաշտութիւնը (Immanentisme). — Արմատին հասնող տապալի խորտակիչ հարուած մըն է նաեւ երկրապաշտութիւնը, որ մերժելով ստեղծագործութիւնը՝ բացաւ Աստուծոյ գերեզմանը։ Մարդն ու տիեզերքը մնացին փակուած՝ իրենց անձուկ իրականութեան մէջ. մինչդեռ՝ գիտականօրէն, մշակութապէս եւ աստուածաբանական գետնի վրայ, անբուժելիօրէն խոցուած Աստուածը կ'իջնէր գերեզման։

Անխուսափելիօրէն այս աշխարհայեացքի զոհն է նաեւ քրիստոնեան, որ «կը տեսնէ թէ իր Աստուածը, իրականութեան մէջ, այն հիմը չէ, որուն վրայ կը բարձրանայ այն ամէն ինչ՝ որ սովորաբար կը նկատուէր իբրեւ լրացուցիչ մասը քրիստոնէական մշակոյթի մը։ ... Այսպէս, ներկայ ճգնաժամային կացութեան մէջ, նուազագոյնը որ քրիստոնեայ մը կրնայ եւ պարտի ընել՝ է տեսնել հակասութիւնը քրիստոնէական գաղափարականին եւ այս ապաքրիստոնէացած աշխարհի սկզբունքներուն միջեւ»³¹։

Օգտապաշտութիւնը (Pragmatisme). — Ասիկա զուտ ամերիկեան մտածելակերպ մըն է, շատ տարածուած նաեւ Ամերիկայէն դուրս ալ։ Ծճմարտութեան իբրեւ միակ դատանիչ կը ճանչնայ օգուտը։ Որեւէ իրականութիւն, ըլլա՛յ անիկա իմաստասիրական դրութիւն մը, եւ կամ՝ գիտական, դաստիարակչական, քաղաքական ու կրօնական որեւէ վարդապետութիւն մը, ճշմարիտ է՝ եթէ որեւէ չափով օգտակարութիւն մը ունի։

Այս տրամադրութեամբ է որ արդի մարդը կը մօտենայ հաւատքին ալ, ճշտելով անոր արժէքը՝ այս աշխարհի մէջ ստացած իր հատուցումներէն։ Արդի մարդուն համար գերագոյն երջանկութիւնը նիւթական բարեկեցութիւնն է. անկէ դուրս ոչինչ կը հետաքրքրէ զինքը, ո՛չ հաւատքի մաքրութիւնը, ոչ ալ սրտի ուղղութիւնը։

Աւելորդ է ըսել որ այս վարդապետութիւնը քանդիչ հետեւանքներ ունի հաւատքին համար։ Անիկա, միացած երկրապաշտութեան, «կ'անդամալուծէ հաւատքը, այսինքն՝ քրիստոնէութիւնը, եւ ամէն բան միեւնոյն մակարդակին վրայ կը դնէ»³²։

30. Անդ, էջ 173։

31. Անդ, էջ 174։

32. Անդ, էջ 182։

Քրիստոնեությունը սխալները. — Վահանեանի համաձայն՝ Աստուծոյ մահը փութացնող քրիստոնէութեան սխալները երկու հատ են.

1. Տատամսոտ քրիստոնէութիւնը թոյլ տուաւ որ վերը յիշուած մոլոր վարդապետութիւնները եղծեն իր դիմագիծը: Եւ իրապէս, կը հաստատէ Վահանեան, Աստուած մեռած է՝ ո՛չ թէ աշխարհի մերժումին հետեւանքով, այլ՝ որովհետեւ քրիստոնէութիւնը դաւաճանած է անոր եւ ուրացած է զայն: «Յետ-քրիստոնեայ դարաշրջանին պատասխանատուութիւնը կը ծանրանայ աւելի մոլորած քրիստոնէութեան՝ քան թէ գիտութեան կամ ուրիշ որեւէ նիւթապաշտ շարժումի մը մեծամտութեան վրայ...»³³:

Գիտութեան յաղթանակները չափազանց շլացուցած էին ԺԹ. դարու մանաւանդ բողոքական աստուածաբանները, որոնք պերճօրէն կը փաստէին թէ քրիստոնէութիւնը ինքզինքը գիտութեան հակառակ չի նկատեր, երբե՛ք: Իսկ այդ գիտութիւնը եւ անկէ ծագող «հիւմանիզմ»ը եւ տիեզերքը կը ներկայանային իրբեւ ինքնաբաւ եւ ինքնավար իրականութիւններ...: Քրիստոնեայ աստուածաբաններուն համար այդ երկրապաշտ աշխարհահայեացքը կը փոխարինէր Աստուածն ու անոր փրկագործ ծրագիրները:

Ինչ որ երկրաւոր էր եւ սահմանափակ, «հետեւաբար՝ անհունօրէն կատարելագործելի, անոնց թուեցաւ գերբնականի եւ անսահմանի լաւագոյն մարմնացումը. եւ «հետզհետէ միշտ աւելի ինքնավար եւ ինքնավստահ աշխարհի մը դիմաց, քրիստոնէութիւնը կորսնցուց իմաստը Աստուծոյ, որ երթալով անտանելիօրէն կը ներկայանար իրբեւ անկոչ հիւր մը»³⁴:

2. Քրիստոնէութեան երկրորդ սխալը, դարձեալ Վահանեանի համաձայն, անոր բռնած չափազանց խնամատարի դիրքն է: Քրիստոնէութիւնը իր բացարձակ խնամքին տակ ուղած է պահել աշխարհը, մերժելով ընդունիլ անոր ինքնավարութեան ամէնէն արդար պահանջները:

Հետեւաբար, արդի մտածումի, մշակոյթի եւ կեանքի բեմերէն անհետացած Աստուծոյ մահուան պատճառը եղած է ի՛նքը քրիստոնէութիւնը, Ժխտելով աշխարհն ու իր հարադատ արժէքները, անտեսելով երկրաւոր բոլոր իրականութիւնները, բացարձակապէս ի նպաստ գերբնական շահերու: Եւ արդի մարդը՝ ձեռք բերելով գիտակցութիւնը իր արժանապատուութեան եւ կարողութեան, ուրացած է քրիստոնէական աշխարհահայեացքը, որ չէր կրնար գոհացնել իր հոգեկան պահանջներն ու ձգտումները, մանաւանդ թէ հակառակ էր անոնց³⁵:

33. Ամդ, էջ 187:

34. Ամդ, էջ 187:

35. Ամդ, հմտ. յատկապէս Գլ. Ե.:

ՅԵՏ-ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

Վահանեան կ'ուսումնասիրէ բողոքական միջավայրը, յատկապէս Ամերիկան, որովհետեւ իր կարծիքով՝ բողոքական աւանդութեան մէջ է որ աւելի ցայտուն կերպով կը տեսնուի անցքը քրիստոնեայ դարաշրջանէն դէպի յետ-քրիստոնեայ դարաշրջանը:

Վահանեանի համաձայն, «Աստուծոյ մահը՝ նոր կամ անցողակի երեւոյթ մը չէ: «Աստուծոյ մահը» պատահական դէպք մը չէ, ոչ ալ ժամանց մը, այլ իրական կարելիութիւն մըն է, որ կը ցցուի իւրաքանչիւր մարդու դիմաց: Կարծէք Աստուածաշունչի օձն է՝ որ նենդաւոր Ժպիտով մը կը փորձէ մեզ. «Աստուծոյ նման պիտի ըլլաք...»: Եւ ինչպէս որ Ազամ պատասխանատու եղաւ իր անկումին, այնպէս ալ քրիստոնէութիւնը պատասխանատու է իր մահուան, որովհետեւ յետ-քրիստոնեայ դարաշրջանը իր պտուղն է»³⁶:

Աստուծոյ մահուան այս մնայուն երեւոյթը, արդիւնք՝ մարդկային հաւատքի տկարութեան, ցոյց կու տայ որ՝ գործնականին մէջ՝ իւրաքանչիւր դարաշրջան աստուածաբանօրէն միշտ յետ-քրիստոնէական եղած է. որովհետեւ իւրաքանչիւր սերունդ, առանձին առանձին առնուած, ունեցած է իր եղական փորձառութիւնը՝ մարդկային գոյալիճակի ողբերգական իրականութեան, ապրած է աստուածանալու տենչով, փորձելով յաճախ բազմիւ պաշտօնանկ եղած Աստուծոյ դահին վրայ: Առասպելական Պրոմիթեոսէն սկսեալ մարդուն մեծագոյն երազը եղած է ասիկա. աստուածանալ...:

Անշուշտ այս իմաստով չէ որ մեր դարը կը կոչուի յետ-քրիստոնէական դարաշրջան, զանազանուելու համար նախորդ դարերէն: Պատճառը, ինչպէս տեսանք, բոլորովին տարբեր է. այսօր, արդի մարդուն համար, Աստուած մեռած է ո՛չ միայն աստուածաբանօրէն, այլ նաեւ մշակութապէս. Աստուած բացակայ է գիտութենէն, դրականութենէն, արուեստէն: Աստուած այլեւս ոչ մէկ կերպով կը հետաքրքրէ մարդու կեանքը:

Վահանեանի եղական եւ նախասիրած այս եզրակացութիւնը, թէ մեր դարը՝ յետ-քրիստոնէական դարաշրջան մըն է, ներկայ է իր բոլոր գործերուն մէջ: «Աստուծոյ Մահը» գիրքին երրորդ գլուխը ամբողջութեամբ ասոր նուիրուած է: Իրեն համաձայն, յետ-քրիստոնէական դարաշրջան կոչումը կ'արդարանայ նախ անո՞վ՝ որ քրիստոնէութիւնը այսօր դարձած է հոմանիշ կրօնականութեան (religiosité): Վերը խօսեցանք արդէն ասոր մասին: Անիկա քրիստոնէութեան ցեցն է. եւ քրիստոնէութիւնը՝ մաշած անոր հարուածներէն՝ նուազ վճռականութեամբ կը ներկայանայ մարդկութեան: Հաւատքի

36. Ամդ, հմտ. էջ 20:

նախնական զորութիւնը կորսուած է, իսկ «Աւետարանին եւ դրապաշտ մտածողութեան միջեւ եղած տարբերութիւնը աւելի մեծ է քան այն՝ որ, Տերտուղիանոսի համաձայն, կ'անջատէր Աթէնքը Երուսաղէմէն, եւ հեթանոս իմաստութիւնը՝ Ս. Գիրքի ճշմարտութեանէն»³⁷։ Ահաւոր անդունդ մը կը բաժնէ քրիստոնէական հարադատ հաւատքը՝ ներկայ դարու կրօնականութենէն։

Յետ-քրիստոնէական դարաշրջան կոչումը կ'արդարանայ նաեւ անոր համար՝ որ քրիստոնէութիւնը այլեւս չի ներշնչեր ժամանակակից մշակոյթը։ Տեսանք թէ ինչպէս արդի աշխարհը, իր ամբողջ մտաւորական եւ մշակութային կառոյցներով, կը հակառակի քրիստոնէութեան եւ բաժանումի վիճը երթալով կը խորունկնայ։

Քրիստոնէութիւնը կորսնցուցած է այսօր նաեւ իր դերիշխանութիւնը։ Ամբողջ դարեր տեւող ահագին ճիգով ձեռք բերուած դերիշխանութիւն մը, հոգեկան եւ քաղաքական գետնի վրայ, որ դեռ մինչեւ երէկ կը տարածուէր ամէն կողմ, այսօր այլեւս ոչ մէկ աղ-դեցութիւն ունի։ Այսպէս, քրիստոնէութիւնը կը նմանի արքայի մը «որ կորսնցուցած է իր մականը»³⁸։

Վահանեանի համաձայն, վերջալոյսի այս բօթաբեր ցուքերը սեւ մռայլ մը կը ձգեն յատկապէս ժամանակակից դրական հորիզոնին վրայ, մանաւանդ Ժորժ Պեռնանոսի, Ֆրանսուա Մորիաքի, Կրահամ Կրինի, Սամուէլ Պէքէթի եւ Մաքլիշի մեծ վէպերուն եւ տաամներուն մէջ, ուր յայտնի կը տեսնուի արեւմտեան մշակոյթին ճիգը՝ թօթափելու ժամանակավրէպ քրիստոնէութեան մը բթացնող լուծը, եւ ապրելու ազատ՝ իր վերագտած ինքնութեան մէջ³⁹։

Կար ժամանակ՝ երբ քրիստոնէութիւնը մենատէրն էր երկինքի եւ երկրի արժէքներուն, ու չէր հանդուրժեր դոյութիւնը ո'ւնէ մըրցակիցի, ունէ հերետիկոսի։ Այսօր, սակայն, անիկա ստիպուած է հանդուրժել հերետիկոսութիւններուն, որոնք խլած են ղեկը իր ձեռքէն, եւ կարծէք իր գոյութեան հանդուրժելն անգամ մեծ վեհանձնութիւն կը նկատեն։

Այսօր, քրիստոնէութիւնը չի կրնար վերապրիլ՝ եթէ չարունակէ «պայքարիլ կեանքին դէմ...։ Նախնական քրիստոնէութեան տաժած յոյսը Քրիստոսի մօտալուտ դալուստին՝ անհողութիւն մը բերաւ աշխարհի հանդէպ, եւ համոզում մը՝ թէ շնորհքը իր ամբողջութեամբ միայն անդենական աշխարհին մէջ կարելի է գտնել, եւ ոչ հո'ս՝ երկրի վրայ։ Քրիստոսի դալուստին յայտնի յապաղումը, սակայն, ստիպեց քրիստոնէութիւնը՝ որ տարբեր լոյսի տակ նկատէ ասդեանա-

կան կեանքը։ Եւ ահա՛ միջնադարեան համադրական աշխարհայեացքին մէջ՝ շնորհքը նկատուեցաւ ո'չ թէ մերժումը բնութեան, այլ՝ անոր կատարելագործումը... այսպէս՝ բնութիւնը կը ստորադասուէր շնորհքին, եւ կը ստեղծուէր արժէքներու աստիճանաւորում մը։ Այս հեռանկարին մէջ՝ շնորհքը ամէն բան է, բայց ամէն բան չընորհք չէ»⁴⁰։

Այսօրուան ձգտումը, մասնաւորաբար շեշտուած՝ վիպական արտադրութիւններուն մէջ, կ'ուզէ՝ ընդհակառակն՝ ցոյց տալ թէ ամէն բան շնորհք է, նոյնիսկ մեղքը։

Վիպասաններէն ոմանք անդրադարձած են իրերու այս խախուտ դրութեան, ուր քրիստոնէութիւնը իր հակառակորդներուն դէմ անհաւասար պայքարի մէջ է՝ վերահաստատելու համար տիեզերքի եւ մարդուն վրայ ունեցած իր երբեմնի դերիշխանութիւնը։ «Բայց քրիստոնէութիւնը նուազ խեղաթիւրուած չէ՝ քան իր հակառակորդները... անիկա կը ներկայանայ իր հակառակորդներուն դրած պահանջներէն աւելի դիւրին ընդունուելիք պահանջներով... (այսօր) շատ աւելի դիւրին է անոր Աստուածը գոհացնելը»⁴¹։

Վահանեան զանազան կտորներ կը մէջբերէ վերը յիշուած վիպասաններուն գործերէն, ընելով յաջող վերլուծումներ։ Իր արձակած սլաքներէն շատերը ուղիղ նպատակին կը դպչին. սակայն, ինչպէս ըսինք, իրը ըլլալով զուտ ընկերային եւ պատմական վերլուծում մը, չ'ընդգրկեւ քրիստոնէութիւնը իր ամբողջութեան մէջ, այլ կը նկատէ միայն անոր ընկերային, վարչական եւ ծիսային կառոյցը, որ անտաթակոյս շարունակ վերանորոգումի կը կարօտի։

Աստուածաբանական անհրաժեշտ նկատողութիւններէն անկախ՝ եւ տեսանք որ իր այս անտեսումը կամաւոր էր՝ գործնական գետնի վրայ, կրնանք ձայնակցիլ իրեն՝ ընդունելու թէ որոշ քրիստոնէութիւն մը մեռած է, թէ որոշ Աստուած մը մեռած է։ Հետեւաբար, քրիստոնէութիւնը պատմա-մշակութային գետնի վրայ պէտք ունի ինքնաքննադատումի. գործ մը՝ որ սկսած է արդէն, եւ որուն մասին պիտի անդրադառնանք։

Այս նոյն անհրաժեշտութիւնը կը զգացնեն, օրինակի համար՝ Պեռնանոս եւ Կրին։ Առաջինը՝ իր «Գիւղական ժողովրդապետի մը օրագիրը» վէպով, երկրորդը՝ իր «Զօրութիւն եւ Փառք» վէպով։ Երկուքին հերոսներն ալ քահանաներ են, որոնք, կ'ըսէ Վահանեան, կը պայքարին նոյնինքն քրիստոնէութեան դէմ, մէկը՝ անոր արտաքին անկումին, միւսը՝ անոր ներքին սնանկութեան դէմ։

37. ԱՅԳ, էջ 57։

38. ԱՅԳ, էջ 58։

39. ԱՅԳ, հմտ. Գլ. 2.։

40. ԱՅԳ, էջ 107։

41. ԱՅԳ, էջ 109։

նախնական զորութիւնը կորսուած է, իսկ «Աւետարանին եւ դրապաշտ մտածողութեան միջեւ եղած տարբերութիւնը աւելի մեծ է քան այն՝ որ, Տերտուղիանոսի համաձայն, կ'անջատէր Աթէնքը Երուսաղէմէն, եւ հեթանոս իմաստութիւնը՝ Ս. Գիրքի ճշմարտութենէն»³⁷։ Ահաւոր անդունդ մը կը բաժնէ քրիստոնէական հարադատ հաւատքը՝ ներկայ դարու կրօնականութենէն։

Յետ-քրիստոնէական դարաշրջան կոչումը կ'արդարանայ նաեւ անոր համար՝ որ քրիստոնէութիւնը այլեւս չի ներշնչեր ժամանակակից մշակոյթը։ Տեսանք թէ ինչպէս արդի աշխարհը, իր ամբողջ մտաւորական եւ մշակութային կառույցներով, կը հակառակի քրիստոնէութեան եւ բաժանումի վիճը երթալով կը խորունկնայ։

Քրիստոնէութիւնը կորսնցուցած է այսօր նաեւ իր դերիշխանութիւնը։ Ամբողջ դարեր տեւող ահագին ճիգով ձեռք բերուած գերիշխանութիւն մը, հոգեկան եւ քաղաքական գետնի վրայ, որ դեռ մինչեւ երէկ կը տարածուէր ամէն կողմ, այսօր այլեւս ոչ մէկ աղ-դեցութիւն ունի։ Այսպէս, քրիստոնէութիւնը կը նմանի արքայի մը «որ կորսնցուցած է իր մականը»³⁸։

Վահանեանի համաձայն, վերջալոյսի այս բօթաբեր ցուքերը սեւ մռայլ մը կը ձգեն յատկապէս ժամանակակից դրական հորիզոնին վրայ, մանաւանդ Ժորժ Պեռնանոսի, Ֆրանսուա Մորիաքի, Կրահամ Կրինի, Սամուէլ Պէքէթի եւ Մաքլիշի մեծ վէպերուն եւ տումներուն մէջ, ուր յայտնի կը տեսնուի արեւմտեան մշակոյթին ճիգը՝ թօթափելու ժամանակավրէյ քրիստոնէութեան մը բթացնող լուծը, եւ ապրելու ազատ՝ իր վերագտած ինքնութեան մէջ³⁹։

Կար ժամանակ՝ երբ քրիստոնէութիւնը մենատէրն էր երկինքի եւ երկրի արժէքներուն, ու չէր հանդուրժեր դոյութիւնը ո'ւրեք մըր-ցակիցի, ունէ հերետիկոսի։ Այսօր, սակայն, անիկա ստիպուած է հանդուրժել հերետիկոսութիւններուն, որոնք խլած են ղեկը իր ձեռքէն, եւ կարծէք իր դոյութեան հանդուրժելն անգամ մեծ վեհանձնութիւն կը նկատեն։

Այսօր, քրիստոնէութիւնը չի կրնար վերապրիլ՝ եթէ շարունակէ «պայքարիլ կեանքին դէմ...։ Նախնական քրիստոնէութեան տաճած յոյսը Քրիստոսի մօտալուտ գալուստին՝ անհոգութիւն մը բերաւ աշխարհի հանդէպ, եւ համոզում մը՝ թէ շնորհքը իր ամբողջութեամբ միայն անդենական աշխարհին մէջ կարելի է գտնել, եւ ոչ հո'ս՝ երկրի վրայ։ Քրիստոսի գալուստին յայտնի յապաղումը, սակայն, ստիպեց քրիստոնէութիւնը՝ որ տարբեր լոյսի տակ նկատէ ասդենա-

կան կեանքը։ Եւ ահա՛ միջնադարեան համադրական աշխարհայեացքին մէջ՝ շնորհքը նկատուեցաւ ո'չ թէ մերժումը բնութեան, այլ՝ անոր կատարելագործումը... այսպէս՝ բնութիւնը կը ստորադասուէր շնորհքին, եւ կը ստեղծուէր արժէքներու աստիճանաւորում մը։ Այս հեռանկարին մէջ՝ շնորհքը ամէն բան է, բայց ամէն բան չընորհք չէ»⁴⁰։

Այսօրուան ճգնաժամը, մասնաւորաբար շեշտուած՝ վիպական արտադրութիւններուն մէջ, կ'ողգէ՝ ընդհակառակն՝ ցոյց տալ թէ ամէն բան շնորհք է, նոյնիսկ մեղքը։

Վիպասաններէն ոմանք անդրադարձած են իրերու այս խախուտ դրութեան, ուր քրիստոնէութիւնը իր հակառակորդներուն դէմ անհաւասար պայքարի մէջ է՝ վերահաստատելու համար տիեզերքի եւ մարդուն վրայ ունեցած իր երբեմնի գերիշխանութիւնը։ «Բայց քրիստոնէութիւնը նուազ խեղաթիւրուած չէ՝ քան իր հակառակորդները... անիկա կը ներկայանայ իր հակառակորդներուն դրած պահանջներէն աւելի դիւրին ընդունուելիք պահանջներով... (այսօր) շատ աւելի դիւրին է անոր Աստուածը գոհացնելը»⁴¹։

Վահանեան զանազան կտորներ կը մէջբերէ վերը յիշուած վիպասաններուն գործերէն, ընելով յաջող վերլուծումներ։ Իր արձակած սլաքներէն շատերը ուղիղ նպատակին կը դպչին. սակայն, ինչպէս ըսինք, իրը ըլլալով զուտ ընկերային եւ պատմական վերլուծում մը, չ'ընդգրկեր քրիստոնէութիւնը իր ամբողջութեան մէջ, այլ կը նկատէ միայն անոր ընկերային, վարչական եւ ծիսային կառույցը, որ անտաճախկոյս շարունակ վերանորոգումի կը կարօտի։

Աստուածաբանական անհրաժեշտ նկատողութիւններէն անկախ՝ եւ տեսանք որ իր այս անտեսումը կամաւոր էր՝ գործնական գետնի վրայ, կրնանք ձայնակցիլ իրեն՝ ընդունելու թէ որոշ քրիստոնէութիւն մը մեռած է, թէ որոշ Աստուած մը մեռած է։ Հետեւաբար, քրիստոնէութիւնը պատմա-մշակութային գետնի վրայ պէտք ունի ինքնաքննադատումի. դորժ մը՝ որ սկսած է արդէն, եւ որուն մասին պիտի անդրադառնանք։

Այս նոյն անհրաժեշտութիւնը կը զգացնեն, օրինակի համար՝ Պեռնանոս եւ Կրին։ Առաջինը՝ իր «Գիւղական ժողովրդապետի մը օրագիրը» վէպով, երկրորդը՝ իր «Զօրութիւն եւ Փառք» վէպով։ Երկուքին հերոսներն ալ քահանաներ են, որոնք, կ'ըսէ Վահանեան, կը պայքարին նոյնինքն քրիստոնէութեան դէմ, մէկը՝ անոր արտաքին անկումին, միւսը՝ անոր ներքին սնանկութեան դէմ։

37. ԱՅԳ, էջ 57։

38. ԱՅԳ, էջ 58։

39. ԱՅԳ, հմտ. ԳԼ. 2.։

40. ԱՅԳ, էջ 107։

41. ԱՅԳ, էջ 109։

Այստեղ հարցը այլևս քահանայ-անհատներու մասին չէ, այլ կ'ընդգրկէ աւելի ընդարձակ ասպարէզ մը, հաւատքը: Իրապէս, Պեռնանոսի եւ Վրինի քահանաներուն կրած տառապանքը, անկումներն ու արկածները ուրիշ բան չեն ներկայացներ՝ եթէ ոչ քրիստոնէական հաւատքի անդամալուծումը: Եւ խորտակուած հաւատքով քրիստոնէութիւն մը ո'չ մէկ արժէք ու հետաքրքրութիւն կը ներկայացնէ:

ՁԱԽՈՂ ՓՈՐՁԵՐ

Ուրեմն, կ'եզրակացնէ Վահանեան, կ'ապրինք յետ-քրիստոնէական դարաշրջանի մը մէջ: Իր այս նախասիրած եղբակացութեան իրրեւ վերջին փաստ՝ կը յիշէ զանազան իմաստասէրներու եւ աստուածաբաններու կողմէ եղած ձախող փորձերը, որոնց նպատակն էր նոր յարաբերութիւններ ստեղծել՝ մշակոյթին եւ քրիստոնէութեան միջեւ, տալով այս վերջինիս նոր բանաձեւումներ, աւելի դիւրամբըռնելի՝ արդէ մարդուն համար:

Կարելի՞ բան է, սակայն, որ քրիստոնէութիւնը յաջողի նոր յարաբերութիւններ իրազործել արդէ աշխարհին հետ. կամ՝ արդէ աշխարհը պիտի ընդունի՞ իրեն երկարած եղբայրական ձեռքը:

Անտարակոյս, կ'ըսէ Վահանեան, «քրիստոնէութիւնը այսօր աւելի յստակ գիտակցութիւնը ունի իր պարտականութեան... անիկա միշտ աւելի կը զգայ անհրաժեշտութիւնը դիմադրաւելու առարկայական պարագաներ... աստուածաբանութեան մէջ, հոսկ, ինչ որ էական բան կ'ըսուի կամ կ'իրազործուի, ցոյց կու տայ յայտնի փափաք մը՝ ընդառաջելու ներկայ կացութեան»⁴²:

Բայց արդիանալու այս մարմաջը արդեօք ծերութեան նշան չէ՞, հարց կու տայ Վահանեան: Իրեն համար ասիկա պարզ հետաքրքրութիւն մը չէ, այլ լուրջ հարց մըն է, եւ անոր ետեւ ծուարած տառակոյսը իր շարժառիթը ունի. եւ իրապէս, «քրիստոնէութիւնը հինէն ի վեր եղած է կրօնքը ապագայ-անդենական կեանքին, կրօնքը՝ որ սրբազործած է անցեալի իր իրազործումները, եւ ասոր համար չէ զղջացած: Բայց ահա, այս կրօնքը յանկարծակի կ'ուղէ ըլլալ արդէ աշխարհին եւ անոր ճակատագրին լրացուցիչ մէկ մասը...»⁴³:

Հետեւաբար, բնական է որ ներկային հետ համընթանալու իր ճիգը՝ կասկած արթնցնէ ուշադիր դիտողի մը մտքին մէջ: Եւ Վահանեան կը քննադատէ այդ ուղղութեամբ եղած բոլոր փորձերը, որոնք՝ ըստ իրեն՝ ձախողած են, որովհետեւ անոնց հիմերը խախտու էին: Սխալ է կարծել, կ'ըսէ Վահանեան, որ քրիստոնէութիւնը կեն-

սունակ է, պարզ անոր համար՝ որ անցեալի աւանդական սովորութիւններ կը շարունակեն տակաւին յամառօրէն գոյատեւել, առանց սակայն որեւէ այժմէական իմաստ ունենալու կամ իրական հետաքրքրութիւն արթնցնելու: Սխալ է դարձեալ անջատել բարոյականութիւնը հոգեւոր կեանքէն, եւ մշակոյթը՝ կրօնքէն: Նման անջատում մը մեծապէս կը վնասէ քրիստոնէական աւանդութեան այժմէական արժէքին եւ կենսունակութեան: Եւ սակայն, կը դանդատի Վահանեան, ա'յս է հիմնական ուղղութիւնը՝ որ կ'առաջնորդէ «ձախող փորձերուն» հեղինակները:

Կ'ապշի Վահանեան տեսնելով որ անոնք կը հաստատեն թէ քրիստոնէական դարաշրջանը, հակառակ երկհազարամեայ քրիստոնեայ անցեալին, դեռ նոր պիտի սկսի, եւ թէ քրիստոնէութիւնը հետզհետէ հսկայական ազդեցութիւն պիտի ունենայ՝ բոլոր ասպարէզներդէն մէջ:

Մասնաւորապէս կը ծանրանայ այս փորձերէն գլխաւորին, այսինքն՝ Ժազ Մարիթէնի դործին վրայ, որ ամբողջական, եւ հետեւաբար՝ քրիստոնէական «հիմանիզմ»ի մը դրօշին տակ կ'ուղէ միացընել կրօնքի, արուեստի եւ մշակոյթի բոլոր հիմնական արժէքները: Գրեթէ ամբողջ Ե. գլուխը նուիրուած է Մարիթէնի Humanisme Intégral⁴⁴ հատորին քննադատութեան:

Վահանեան անշուշտ չի կրնար ընդունիլ նման դիրքաւորում մը, որ բոլորովին հակառակ է իր հասած եղբակացութեան: Իրեն համաձայն, պատմա-մշակութային հետազոտութիւնները միայն մէկ հատիկ եզրակացութեան կրնան բերել մեզ, այսինքն՝ թէ կ'ապրինք յետ-քրիստոնէական դարաշրջանի մը մէջ, հիմնուած Աստուծոյ մահուան դադափարին վրայ, որ ասկէ ետք պիտի կազմէ մեր քաղաքաւորութեան գլխաւոր առանցքը:

Հետեւաբար, որեւէ փորձ՝ որ կը ձգտի վերարծարծել քրիստոնէութիւնը ներկայ աշխարհի իրականութեան մէջ, ցոյք մը աւելի կրնայ աւելցնել մարմորող վերջալոյսին մէջ խորասուզուող քրիստոնէութեան վրայ, որ սակայն, աւա՛ղ, նոր արշալոյս մը պիտի չունենայ, երբե՛ք:

Ինչպէս կը տեսնուի, Աստուծոյ համար ա'լ ընելիք չէ մնացած: Անոր դադաղին շուրջ հաւաքուած յուղարկաւորներուն միակ մտահոգութիւնը, կարծէք, մնացած ճոխ ժառանգութեան բաժանումն ըլլայ: Բայց Վահանեան այդքան չ'աճապարեր. ան չի կրնար կամ չ'ուզեր խուսափիլ վերջին հարցէ մըն ալ. Աստուած արդեօք վերջնականապէ՞ս մեռած է...

42. Անդ, էջ 85-86:

43. Անդ, էջ 87:

44. Paris, Aubier, 1936:

Այստեղ Վահանեան զանազանութիւն մը կ'ընէ գիտական ախտա-
ճանաչումին եւ կրօնական հաւատքին միջեւ: Գիտութեան համար՝
Աստուած վերջնականապէս մեռած է, բայց հաւատքին համար — եւ
այս անգամ իրաւ հաւատքին համար — Աստուած կ'ապրի եւ չի կըր-
նար երբեք մեռնիլ:

Ներկայ ընկերային, մշակութային եւ պատմական իրականու-
թեան մէջ լուծուած քրիստոնէութիւնը «հասած է կէտի մը, ուրկէ
վերադարձ չկայ»⁴⁵. Գիտական ախտանշումը չի հաւատար քրիստո-
նէութեան վերադարձումին, չի հաւատար անոր յարուստեան: Կար-
ծէք՝ քրիստոնէութիւնը վերջացուցած է իր պաշտօնը եւ այլեւս դոր-
ծի չի դար. կեանքը լեցուն է այստեսակ ցեցակեր դրութիւններով,
որոնք՝ օգտագործուելէ ետք, մէկըի կը նետուին»⁴⁶, ճիշտ մաշած
աւելի մը պէս...

Ընդհակառակն, հաւատքի ծիրին մէջ՝ քրիստոնէութիւնը չի կըր-
նար մեռնիլ, որովհետեւ «բացարձակ երկրապաշտութիւնը ո'չ մէկ
լուծում կու տայ մարդուս ողբերգական դոյալիճակին, որովհետեւ՝
հակառակ որ կը փորձէ սահմանել մարդս իր նմաններուն հետ ու-
նեցած յարաբերութեան տեսանկիւնէն, չի կրնար ուրիշ ձեւով ներ-
կայացնել զայն՝ եթէ ոչ իր ընկերոջ իբր Աստուածը կամ դայլը: Աս-
տուածաշունչին մէջ ալ մարդս ներկայացուած է իր նմաններուն հետ
ունեցած յարաբերութեան տեսանկիւնէն. Պիտի սիրես ընկերդ՝ քու
անձիդ պէս: Բայց մարդս ըլլալով սահմանափակ էակ մը, չի կրնար
ո'չ սահմանել, ոչ ալ ըմբռնել. Աստուած միայն — Անսահմանը, Բո-
լորովին Ուրիշը — կրնայ սահմանել եւ ըմբռնել զայն»⁴⁷:

ՀԱՇՈՒԵԿՇԻՒ ՄԸ

Կը կարծենք տուած ըլլալ Փրոֆ. Գաբրիէլ Վահանեանի տեսու-
թիւնը՝ իր կորիզին մէջ: Բաղմաթիւ են դրական քննադատութիւն-
ներն ու ընդունելի կէտերը, որոնց տակ պիտի չվարանէր ստորագրել
որեւէ սրտցաւ քրիստոնեայ: Ճիշտ է որ Վահանեան՝ Քարլ Պարթի
ուղղակի ազդեցութեան տակ է. բայց անկախաբար ասկէ, ո'վ պի-
տի չընդունէր թէ քրիստոնէութիւնը այսօր ա'յնքան բացակայ է մար-
դուս կեանքէն, որ կը մղէ մեզ հաւատալու՝ թէ իրապէս յետ-քրիս-
տոնէական դարաշրջանի մը մէջ կը գտնուինք: Քրիստոնէութիւնը
այսօր կարծէք վերածուած ըլլայ ամբոխային չափանիշով արտադրու-

45. La mort de Dieu, էջ 208:

46. Անդ, էջ 173:

47. Անդ, էջ 209-210:

թեան մը, որ եկեղեցիներէն ներս յաճախ կը յայտնուի բարեպաշտիկ
ու եսասէր կրօնականութեան մը դիմակին տակ:

Բաղմաթիւ ուրիշ կէտեր, սակայն, վերապահ կը ձգեն ուշադիր
ընթերցողը: Այստեղ չենք ուզեր կեդրոնանալ մեր հեղինակէն շո-
շափուած զուտ աստուածաբանական հարցերուն շուրջ, որոնք ան-
տեղի կերպով պիտի երկարէին ներկայ դրութիւնը: Քանի որ Վա-
հանեանի նպատակը աստուածաբանական տեսութիւն մը ներկայա-
ցնելը չէ, այլ կը մնայ լոկ ընկերա-պատմական հետազոտութեան մը
սահմաններուն մէջ, մենք ալ անկէ անդին պիտի չանցնինք:

Այս վերջին տեսակէտէն դիտուած, չափազանց խիստ կը թուի
մեզի Վահանեանի զայրոյթը՝ ներկայ սերունդին դէմ, մինչ աւելի
ներողամիտ է անցեալին հանդէպ: Արդ, առնենք օրինակի համար,
Ժ. Ժե կամ ԺԸ. դարերը. այդ դարերու քրիստոնէութիւնը ար-
դեօք աւելի լա՞ւ էր՝ քան Ի. դարունը...: Այդ դարերը մշակու-
թապէս կամ ընկերային գետնի վրայ աւելի լա՞ւ էին՝ քան Ի. դա-
րը... Թողունք որ հաւատքը չի կրնար գիտական փորձարկութեան
դատանիչներուն ենթարկուիլ: Հետեւաբար, իմաստ չունի ըսել, ինչ-
պէս կը յարէ Վահանեան, որ քրիստոնէութիւնը մեռած է, եւ մենք
Աստուծոյ մահուան սղակիրներն ենք: Մէկը կրնայ Աստուծոյ մահ-
ուան փորձառութիւնը ունենալ առ առաւելն ինք իր մէջ, բայց ոչ
երբեք ուրիշներուն մէջ:

Վահանեանի ուրիշ մէկ տկար կէտն է նաեւ իր ըրած անպատեհ
ընդհանրացումը: Տեսանք թէ իր հետազոտութեան ասպարէզը Ամե-
րիկայի քրիստոնէութեան ներկայ վիճակն է: Արդ, ատկէ հանած իր
եզրակացութիւնները կ'ընդհանրացնէ ամբողջ քրիստոնէութեան վը-
րայ: Իր ըրած պատմական, մշակութային եւ կրօնական դիտողու-
թիւնները՝ եթէ խորքին մէջ ընդունելի են, ատկեւ հետեւանք չէ,
սակայն, Ամերիկայի քրիստոնէութեան վիճակին:

Քրիստոնէութիւնը զանազան հիւանդութիւններ ունի, որոնք կը
տարբերին երկրէ երկիր: Ամերիկայի քրիստոնէութեան պարադան
բոլորովին տարբեր է եւրոպականէն: Ոչ ալ կարելի է բաղդատել
Ռուսիոյ, Ծայրագոյն Արեւելքի կամ Ափրիկէի քրիստոնէութիւնը՝
Արեւմտեան աշխարհի քրիստոնէութեան հետ:

Հուսկ, Վահանեան, ինչպէս տեսանք, կը կեդրոնանայ ներկայ
ընկերութեան «աշխարհականացում»ին (sécularisation) վրայ, որուն
հետաքրքրութեան միակ առարկան երկրաւոր իրականութիւնն է: Այս
յաւակնութիւնը հիմնուած է առասպելի մը վրայ, որ է արդի մար-
դուն հասունութիւնն ու ինքնաբաւութիւնը, որոնք միացած Աստուծո-
մէ խլուած այլ մենաշնորհներուն, կը մարմնացնեն մեր աչքին առ-
ջեւ Նիցչէի երազած Գեթմարդը...: Ան ինքզինքը կը կարծէ կանգ-

նաժ ըլլալ բուրգի մը դադաթին վրայ, որմէ վար ամէն բան անար-
ժէք եւ անիմաստ է...:

Եւ ինչո՞ւ չհպարտանայ, արդի՞ մարդը... չէ՞ որ ունի դեղեր՝
իր ցաւերուն համար, հիւլէական ռումբեր՝ ինքզինքը «պաշտպանել» ու
համար, հաղարումէկ քիմիական բաղադրութիւններ՝ իր ամէնօրեայ
յոգնութիւնը թեթեւցնելու համար...: Ալ ի՞նչ գործ կը մնայ Աս-
տուծոյ, ամպերու վրայ բազմող այն ալեհեր ծերունիին, որուն ա-
տենօք կը դիմէին մարդիկ՝ իրենց կարիքներուն համար...:

Աստուծոյ այս բացակայութիւնը, սակայն, կարծէք ամայացու-
ցած է «առասպելազրկուած» (démystologisé) տիեզերքը, դատարկած՝
մարդուն հոգին, աննախընթաց անհաւասարակչութիւն մը ստեղծած՝
մարդուս անհամեմատօրէն աճած ֆիզիքական եւ բոլորովին նսեմա-
ցած հոգեկան ոյժերուն միջեւ: Ասոր հետեւանքը շատ յայտնի է այս-
օր ընկերութեան մէջ. ձանձրոյթը, անձկութիւնը, կեանքի իմաստա-
զրկումը, եւ ասոնցմէ առաջ եկած հոգեկան ու մտային հիւանդու-
թիւնները՝ իրենց ամեհի ճիրաններուն մէջ սեղմած են դժբախտ մարդ-
կութիւնը:

Այսպէս, մարդուս յուսահատ դայրոյթին առաջին զոհը ինքը
մարդն է, որ իր հետ դերեզման կ'ուզէ իջեցնել նաեւ Աստուածը:
Բայց շատ տարակուսելի է որ արդի մարդը կատարեալ անաստուած
մը ըլլայ, որովհետեւ հոգեկան անխառն ուրախութեան տարբեր պատ-
ճառ եւ նպատակ կամ հոգեկան տառապանքի տարբեր սպեղանի մը
դեռ չէ գտնուած: Արդի մարդն ալ, նախնական մարդուն պէս, կը
խռովի մահուան առջեւ, եւ ի հեճուկս իր հռչակուած յառաջդիմու-
թեան ու հասունութեան՝ մահուան խորհուրդին դիմաց, Աստուծոյ
փոխարէն՝ հոգեհարցներուն եւ կախարդներուն կը դիմէ...: Նոյն
սնահաւատը մնացած է տակաւին:

Այս բոլորին վրայ, հսկայ չփոթ մըն ալ միտքին մէջ՝ բուն ի-
մաստութեան եւ արդի յառաջադիմութեան միջեւ: Հետեւաբար, ար-
դի մարդուն հասունութիւնն ու ինքնաբաւութիւնը չինծու հէքեաթ
մըն է, անճոռնի կատակ մը դուցէ, եւ ահաւոր առասպել մը...: Եւ
արդեօք ճիշտ այս չէ՞ պատճառը՝ որ կը նմանի թեւատ թռչունի մը,
որ մոլորած է անտառին մէջ, եւ չի գիտեր թէ ուր թառի՝ իր վէր-
քերը դարմանելու համար...:

Արդ, ի՞նչ պէտք է ընէ քրիստոնեան՝ այս շմորած եւ շմորե-
ցուցիչ աշխարհին մէջ: Անշուշտ, եթէ կ'ուզէ հաւատարիմ մնալ Քրիս-
տոսի աւանդին, չի կրնար քողարկել իր ինքնութիւնը եւ կլանուի
հոսանքէն: Իր կեանքը վկայութիւն մը պէտք է ըլլայ՝ Քրիստոսի վը-
րայ ունեցած իր հաւատքին. եւ այդ հաւատքը, գիտենք որ կը հա-
ւաստէ՝ թէ Աստուած Քրիստոսի միջոցով մօտեցած է մարդկութեան,
ո՛չ միայն խօսքով եւ գործով (քարոզութեամբ եւ հրաշքներով), այլ

նաեւ իր հիմնած Եկեղեցիով: Եւ բնական է որ Եկեղեցին աւելի ազ-
դու եւ վճռական վերապահութիւն մը ցոյց տայ աշխարհականացու-
մի այս երեւոյթին յաճախ երկդիմի արժէքներուն հանդէպ: Այս կէ-
տին մէջ՝ բողոքական աշխարհը աւելի թոյլատու է եւ նուազ վը-
ճռական:

Այս արդար վերապահութիւնը, սակայն, արդեւ մը չի կրնար
ըլլալ որ Եկեղեցին ալ, իր կարգին, շարունակ կատարելագործէ իր
դիմագիծը, որպէսզի կարենայ միշտ աւելի կենդանի պատկերն ըլ-
լալ իր աստուածային Հիմնադրին: Վատիկանեան Բ. տիեզերական
Ժողովի գլխաւոր մտահոգութիւնը եղաւ ասիկա. Եկեղեցին ճանչցաւ
անհրաժեշտ եւ արդար ինքնավարութիւնը մարդկային եւ նիւթական
արժէքներուն, սակայն միշտ շեշտեց հոգիին առաջնութիւնը՝ նիւ-
թին վրայ: Ժողովը նոր հորիզոններ բացաւ Եկեղեցւոյ եւ աշխարհի,
հաւատացեալներու եւ անհաւատներու փոխ-յարաբերութիւններուն
համար:

Այս բոլորով հանդերձ, քրիստոնէութիւնը դիտակից է որ կաբե-
նալու համար իր ծառայութիւնը մատուցանել աշխարհին, պէտք չէ
որ տեղի տայ ասոր առջեւ՝ ուրանալով ինքզինքը, այլ պէտք է որ
աւելի խորապէս եւ հարազատօրէն պահէ իր ինքնութիւնը:

Հետեւաբար, հակառակ որ խորքին մէջ կարելի է համաձայնիլ
Վահանեանի հետ քրիստոնէութեան ճշմարտամին շուրջ, սակայն վե-
րեւ յիշուած նկատողութիւններուն համար՝ դժուար է ընդունիլ այդ
ճշմարտամն ու հոգեվարքը առաջ բերող իր թուած պատճառները, ո-
րոնք յաճախ տարբեր են իր կարծածէն. դժուար է ընդունիլ մանա-
ւանդ որ այդ հոգեվարքը՝ իր ըսածին չափ ընդհանուր ըլլայ, եւ իր
կարծածին պէս ալ՝ վերջնական: Անցեալ դարերուն ալ անպակաս ե-
ղած են բոթաբեր գուշակները. բայց Վիքոյի, Հեկելի եւ անոր այ-
լազան արբանեակներուն ըրած մարդարէութեանց հանդիսաւոր անի-
րականացումներէն ետք, պէտք է շատ զգոյշ ըլլալ դատաստաններ
ընելէ մարդկութեան կրօնական ապագային մասին: